

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

VOL. I. NO. 13.

FRESNO, CAL. SATURDAY, NOV. 8, 1902.

PRICE, 5 CENTS.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 13.

ՖՐԵՉՆՕ. ԻԱԼ. ՇԱԲԱԹ. ՆՈՅ. 8, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆԹ

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ամեն անոնք որ Քաղաքացի կըստանան և երեք շաբաթ շարունակ կը պահեն զայն՝ մեր կողմէն կանոնաւոր բաժանորդ կը նկատուին: Իսկ անոնք որ չեն փափաքիր բաժանորդագրուիլ Շաբաթաթերթին՝ կը խնդրենք որ հաճին զայն մեզ վերադարձնել անմիջապէս, որպէս զի իրենց անունները ջնջենք մեր ցանկէն:

## Ը Ն Տ Ր Ո Ի Թ Ե Ա Ն Ց Ա Ր Դ Ի Ի Ն Ք Ը

Անցեալ Երեքշաբթի օր Միացեալ Նահանգաց ժողովուրդը՝ գաղանի քուէարկութեամբ՝ իր վճիռը տուաւ դարձեալ ի նպաստ Հանրապետական կուսակցութեան: Անոր անվիճելի կամքն էր որ այս կուսակցութիւնը շարունակէ Պաշնակցական կառավարութիւնն վարել: Թէև Ռամկավարական քանի մը քուէ շահած կը թուին սպգային Քօնկրէսին մէջ, բայց Երեսփոխանութիւնը, Յերակոյտը, (ինչպէս նաև Նախագահը) Հանրապետական կը մնան՝ գէթ երկու տարիներու համար ևս:

Նահանգային ընտրութիւններն ալ ճոյնպէս ակնկալուած արդիւքն չունեցան: Հանրապետականը կը թուի թէ Նահանգիս ժողովրդեան մեծ մասը կրցած են իրենց վարդապետութիւններով համոզել կամ մոլորեցնել յաջողութեամբ:

Քուէներու փոքր տարբերութեամբ՝ Տքթ. Փարտի Նահանգապետ ընտրուեցաւ, թէև Լէյն պիտի բողոքէ եղեր քուէահամարին գէմ: Պիթի, Նիտհըմ, Բաւըլ, Քըրք, Թրէյպըր և Տրու ընտրուած են իրենց ձեռնարկով պաշտօններուն:

Գաւառական ընտրութեանց մէջ Ռամկավարականը քիչ շատ յաջող կերևին. Շէրիֆ, Հարկահաւաք, Ատենադպիր (Քաւնթի Քլըք), Քօրօնըր, Փըպլիք Ատմի-նիսթրէյթըր, Հաշտարար Գատաուր և ուրիշ քանի մը երկրորդական պաշտօնեաներ Ռամկավարականաց կը վերահրերին:

Ազատական կուսակցութեան համար միտիթարական ուրիշ պարագայ մ'ալ սա է թէ Ռամկավարականաց քուէներուն ընդհանուր թիւը աւելի է այս տարի՝ երկու տարի առաջ ստացուած քուէներէն, անանկ որ սխալ գուշակութիւն մը եղած չի պիտի ըլլայ եթէ՝ երկու տարի վերջ՝ Ռամկավարական յաջողութիւն մը ապահովուած նկատենք:

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

—0—

Անցեալ Երկուշաբթի երեկոյ Հայոց Քաղաքական Ակըմբի յայտարարուած ժողովը տեղի ունեցաւ Ֆ. Հ. Գ. Միութեան ժողովարանին մէջ: Խօսողներն ու վիճարանողներն մանրամասնաբար բացատրեցին և հայ քուէատուներուն մատնանիչ ըրին այն գաւառական ընտրելիները որոնք Հայոց համար օգտակար կը նկատուէին՝ առանց կուսակցական խարութեան:

—Անցեալ Զորեքշաբթի երեկոյ Պարթըն Օփէրայի մէջ տեղի ունեցաւ Քինկ Տօնօ անուն կատակերգօսիբեան՝ խուռն բազմութեան մը առջև որուն նմանը շատ քիչ անգամ տեսնուած էր այս թատրոնին մէջ: Հայ հանդիսականք մեծ թիւ մը կը կազմէին այդ երեկոյի բազմութեան մէջ, վասն զի այս խաղ, որ վեց ամիս շարունակ խաղացուած էր ի Զիքակոյ, ու մեծ ընդունելութիւն գտած էր հոն, ունէր իր մէջ մի հայ դերասանուհի՝ յանձին Օր. Յլօրա Զապէլ կամ Զապէլ Մանկասարեանի որ խմբին առաջնորդ տիկինն (Լիտինկ Լէյտին) էր: Հայ դերասանուհին սքանչելի կերպով կատարեց իր դերը. անոր՝ պարելու մէջ ցոյց տուած մեծ յաջողութիւնը, արուեստին նրբութիւնը, քաղցր ձայնը և դերասանելու բնական կերպը խիստ մեծ ընդունելութիւն գտան: Հանդիսականք, որք քաղաքիս բարձր դասակարգը կը ներկայացնէին մեծ մասամբ, շատ անգամներ բուռն ծափահարութիւններով գլղղեցին թատրոնը՝ ի պատիւ հայ դերասանուհիին որ կենդանի հայ վկայ մ'էր հայկական հանճարին ու անոր՝ գեղարուեստի համար ունեցած յարմարութեան:

Քինկ Տօնօ Հայոց ճաշակին անյարմար կատակերգութիւն մ'է՝ երեակայական ծեր թագաւորի մը թեթեամտութեան ու երիտասարդանալու տեսչին վրայ հիմնուած:



\*\*\* ՈՍԿԵՓՈՐԻԿ \*\*\*

\*\* Տըթ. Ղաղարեան, ատամնագործ:

\*\* Ամեն տեսակ սերմեր՝ թ. ձ. Համբնտի քով:

\*\* Լեւոն Քէնտրեան Սարմայի կողմերը քառասուն արտավար երկիր գնեց 800 տոլարի:

\*\* Մեսրոպ Սիմոնեան երկու 'լաթ' երկիր ծախու առաւ քաղաքիս մէջ:

\*\* Յարութիւն Մ. Եանըգեան 110 արտավար հող գնեց քաղաքէս չորս մղոնի չափ դէպի արևմուտք:

\*\* Բարսեղեան և Էփաէրեան ծանօթ դատը չի լրացաւ անցեալ շաբթու, այլ յետաձգուեցաւ մինչ Նոյ. 11

\*\* Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ անդամներուն Ընդհանուր ժողովը տեղի կունենայ վաղը:

Մ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

— 0 —

— Ինչպէս որ իւրն ու ջուրը անհաշտ են իրարու հետ՝ այնպէս ալ կրնն ու գաղտնիքը չեն կրնար հաշտուիլ բնաւ:

— Սամուէլ Թըզ խենթ կանուանէ այն մարդը որ զօրութեամբ կամ վարպետութեամբ կը ջանայ կնկան մը կամաց ընթացքը փոխել:

— Հող չէ որչափ ալ մեր կապանքները պահէի աշխատինք, կըսէ Մօս, բայց կրնն է որ տակաւին կը կառնվարէ՝ զմեզ:

— Սպասելով կեղծ սէրը կայրի, իսկ անկեղծ սէրը կազնուանայ:

— Սէրը ամուսնութեան գլխաւոր կնքուհայրն է, փոխադարձ յարգանքը՝ ամենազաւատարիմ բարեկամը:

— Ամուսնութեան տաճարը յաղթական կերպիւ մըտնելու համար՝ պէտք է սիրոյ և համարման մեծ զըռնէն անցնիլ:

— Ամուսնութեան մէջ երջանիկ ըլլալու համար՝ աւելի բնաւորութեաց յարմարութիւն պէտք է քան մըտաց: Բնաւորութեանց յարմարութիւն ըսելով չենք ուզեր նմանութիւն իմանալ, այլ իրաց ընտիր ներդաշնակութիւն մը որք իրարու քով գետեղուելով սերտիւ կը միանան և բնաւ չեն անջատուիր:

— Եթէ առաքիճութեան կարևորութիւն կուտաս՝ մի մտնար թէ ամուսնութեան մէջ առաքիճութիւնն է առաջին, գողար ու սիրազեղ բարեկամութիւնը:

— Ընկերիդ անկեղծ եղիր, և միանգամայն՝ զգոյշ:

— 0 —

Կինը — Կը զարմանամ որ յանձնարարեցիր ինձ Հայրենիք թերթը կարգամ. այդ ի՞նչ լեզու է որ կը գործածէ այդ լրագիրը. կարգացած ասենս մազերս անկուեցան:

Կունտ գլուխ էրկիւ — Իմ վրայ այդօրինակ սպաւորութիւն մը չըրաւ երբէք:

Ֆ Ր Է Ձ Ն Օ

ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏԵՂԻՆ  
ԱՅԿՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ  
Թէէֆօն — — — Մէյն 24  
ՖՐԷՉՆՕ, ՔԱԼԻՓՕՐՆԻԱ.

Ֆ Ր Է Ձ Ն Օ

ԸՆՏԸՐԹԷՅՔԻՆԿ ՓԱՐԼԸՐՍ  
ՇԱՆՆԸՆ և ՊԻԼ, Տէրեր  
1154 ձէյ փողոց, — Ֆրէզնօ. — Թէէֆօն Մէյն 160

Ընտիր կէրակոշքի հասար գնա

ՍԻԹԻ ՊԷՅՔԸՐԻՆ

— ձ. Մ. Քօհլըր և Փիքֆօրթ, ճաշարանատիրք —  
1138 ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՎՅՈՒՄ

— 0 —

Ազգային Հողարարծութեան խնդրանօք՝ յառաջիկայ Նոյեմբեր 9ի Կիրակի օրը, կէս օրէ վերջ, ժամը երկուքին Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ Ընդհանուր Ժողովը արտաքոյ կարգի նիստ պիտի ունենայ նոյն Եկեղեցւոյ մէջ՝ կարգ մը կարևոր խնդիրներ լուծելու համար: Ի մէջ այլոց ժողովին պիտի ներկայանայ Առաջնորդի ընտրութեան առկախ խնդիրը:

Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ լինիլ անհրաժեշտ այս կարևոր ժողովին:

Ի Դիմաց Ընդհ. Ժող. Ս. Երբ. Եկեղեցւոյ  
Ատենադպիր  
Մ. Ալեմեան

Յ. Գ. Ամեն անոնք որք տակաւին ստորագրած չեն Եկեղեցւոյ կանոնագիրը, կը հրաւիրուին ընդ փոյթ ստորագրել զայն՝ որպէսզի ձայն ու քուէ ունենան ներկայ կարևոր խնդիրներու մէջ:  
Ֆրէզնօ, Հոկ. 2 1902

ԱԶԳ

Նոյ. 27ի Հինգշաբթի երեկոյ ժամը 8ին Ֆ. Հ. Գ. Միութեան ընդհանուր անդամական ժողովը նիստ պիտի ունենայ Միութեան սեփական սրահին մէջ: Կը խնդրուի բոլոր անդամներէն ներկայ գտնուիլ այս կարևոր ժողովին: Ի զիմաց Ֆ. Հ. Գ. Մ. Ընդհ. Ժող. Մ. Ալեմեան, Ատենադպիր

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շարաթ օրեր ի թիւ 1033

ձէ՛ն Փողոց, Էքսփոզիթըրի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԻՆԵԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ՔԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար Տարեկան մէկ ու կէս \$-ու. — Վեցամսեայ 75 Սենթ Ուրիշ երկիրներու համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ

Քաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ

Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին խմբագրութեան հետևեալ հասցէի:

To The Editor of

THE CITIZEN

P. O. Box 1224

Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published Weekly in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months.....75 Cents

ՅՐԷՉՆՕ, ՔԱՂԻՊՕՐԵՒԱ. ՆՈՅ. 8, 1902

Մ Ո Ւ Յ Ո Ւ Ա Մ Ի Ն Դ Ի Ր Ն Ե Ր

Թիւ 2.

Մեր անցեալ թուով Ֆրէզնոյի մօտերը ազգային պղտիկ հիւանդանոց մը կանգնելու պէտքը շեշտեցինք և յիշեցուցինք միանդամայն թէ այդ խնդիր ազգային Հոգաբարձութեան կողմէ՛ ամիսներ առաջ՝ երևան բերուած և ապա մոռցուած կարևոր հարց մ'էր:

Ուրախ ենք որ այս մասին մեր գրածները "Չայն բարբառոյ յանապատի" չեն եղած բոլորովին, այլ քիչ շատ արձագանգ գտած են մեր տեղական ժողովրդին մէջ. և կը յուսանք որ աւելի մեծ ընդունելութիւն պիտի գտնեն արևելեան քոյր գաղթականութիւններէն որոնցմէ ընդհանրապէս կը զրկուին մեզ ամեն տարի շատ մը բուժելի և անբուժելի հիւանդներ:

Բերանացի և գրաւոր շատ մը զիմուձներ եղած են մեզ շարթուս մէջ ծանօթ ազգայիններէ որոնք փափաք յայտնած են՝ այս խնդիրը գործնական վիճակի մը վերածել ուղղութեամբ ձեռնառու ըլլալ: Քանիներ ալ առաջարկած են մեզ որ լրագրոյս միջոցաւ հանգանակութիւն մը բանանք այս կարևոր գործին համար, և անմիջական գործի սկսինք:

Այս առաջարկները ի հարկէ քաջաբերական են քրեանց յատուկ սահմանին մէջ, և ցոյց կուտան թէ սա խնդիրը ժողովրդի սրտին մօտ՝ օգտակար հարց մըն է իրականամարտ արժանի: Սակայն հրապարակաւ ըսելու ենք թէ Քաղաքացին այսպիսի ծանր խնդրի մը մէջ գործօն դեր մը առնելու կամ նախաձեռնարկ ըլլալու զիրքի մէջ չի գտնուիր: Մնաց որ լրագրի մը

անմիջական պարտականութիւնը կը կայանայ՝ այսպիսի պարագաներու մէջ մասնանիշ ընել պէտքերը, թելադրել ու զարկ տալ գործին՝ իւր կարողութեան չափով. անկէ անդին՝ գործնական քայլ առնելը կը վերաբերի պաշտօնական մարմիններու և կամ ընդհանուր ժողովրդեան: Եթէ թերթի մը կողմէն թելադրուած ամեն օգտակար հարց գործնականի վերածելու հոգը անոր խմբագրութեան վրայ բառնալը օրէնք ըլլար՝ թելադրութիւն մը ընող խմբագիր մը կամ թերթ մը խմբագրելու յանձնառու մէկը չի պիտի կրնայինք գտնել՝ մանաւանդ մեր ազգին մէջ:

Շատ ճշմարիտ է թէ կան ամերիկեան թերթեր որոնք այսպիսի խնդիրներու մէջ գործօն դեր կառնեն շատ անգամ, և իրենց ստանձնած գործը ի գլուխ կը հանեն մեծ յաջողութեամբ. սակայն մոռնալու չէ թէ այդ թերթերու ետև նիւթական ու բարոյական ահազին զօրութիւն մը կայ կեցած, և որոնք իրենք իրենց մէջ պղտիկ կառավարութիւն մը կը ներկայացնեն: Ասոնք ընդհանրական գործերու մէջ գործօն դեր մը կը տանձնեն՝ ոչ թէ իբրև լրագրական պարտականութիւն, այլ իբրև մարդասիրական ձեռնարկ՝ թերթի մը անմիջական պարտականութենէն անմատ բոլորովին:

Մեզ կը թուի թէ վերը յիշուած մեր յօժարակամ ազգայինները՝ փոխանակ մեր վրայ անստանալի բեռ մը դնել փորձելու՝ Ազգային Հոգաբարձութեան դիմելու են, որ ոչ միայն առաջարկին բուն տէրն է՝ այլ և քաջաբերի մեծ պէտք ունի այս խնդրի մէջ: Իսկ Քաղաքացին՝ իր բոլոր կարողութեամբ յանձն պիտի առնէ աջակցել Հոգաբարձութեան՝ կամ ուրիշ ու և է մեզմէն ոչ որ յանձն առնէ այս գործ ի գլուխ հանել:

Ժողովրդի մէջ երևան եկած այս շահագրգռութիւնը մեծ քաջաբեր մը նկատուելու է նաև Հոգաբարձութեան կողմէ, որուն յօժարակամ օգնողներ շատ պիտի ելնեն անշուշտ բոլոր քոյր գաղթականութիւններուն մէջէն՝ երբ գործնական առաջին քայլը պնտուի:

Իսկ մեր այն ծայրայեղ կրօնամուլ ազգայինները որոնք մեզազրած են մեզ այս խնդիրը եկեղեցիներ կանգնելու շափ կամ անկէ շատ քիչ կարևոր նկատած ըլլալուս համար, կրնան գէթ վստահ ըլլալ, և պէտք է որ վստահ ըլլան թէ հայ հիւանդին ու անպատրաստ պար ախտաւորին համար տուն մը կանգնելը՝ մեր արդէն կառուցած եկեղեցիներուն ներսն ու դուրսը զարգարելէ և կամ զանոնք բարեփոխութեանց ենթարկելէ գոնէ՝ շատ աւելի կարևոր պէտք մը ներքի է նկատելու: Ամենավերջումն կրօնամուլն անգամ կրնայ այս կարծիքը հաշտեցնել իր խղճին հետ:

Այն մարդը որ սիրտ ունի և քաջաբեր շուքաներուն մէջ՝ տեղունած, գոյկահար ու ցաւզգար հայ կը մախքներու շրջիլը կը տեսնէ ամեն օր՝ նիւթական օգնութեան և օրապահիկի մը անմիջական կարօտ վիճակի մը մէջ, չի կրնար չի ձայնակցել մեզ և առաջնութիւն չի տալ այս խնդրոյն որ ոչ միայն մարդասիրական՝ այլ և ազգային ու հայրենասիրական գործ մ'է:

\* \* \* \* \*

Երբ կը զրենք հիւանդանոցի և հիւանդներու վերայ՝ անոր հետ սերտ կապակցութիւն ունեցող ուրիշ

խնդիր մ'ալ կը ներկայանայ մեզ զոր կը փափաքինք տեղոյս հայ հասարակութեան խորին ուշադրութեան ներկայացնել:

Մեր ազգային գերեզմանատան խնդիրն է այն: Իբր տամն և հինգ տարիներ առաջ Չըրչ անուն մէկը հայ ժողովրդին նուէր ըրած է այս գերեզմանատան հողը որ կը պարունակէ հինգ արտավար երկիր: Մեր գաղութը այն օրէն ի վեր հաղիւ կարողացած է անոր շուրջը ցանկապատ մը կանգնել՝ այն ալ քանի մը անպաշտօն բայց յօժարակամ ազգայիններու նախաձեռնութեամբ՝ երբ տակաւին Հայք եկեղեցիներ չէին կանգնած այս քաղաքիս մէջ:

Գերեզմանատան այժմեան երևոյթը նկարագրելու համար բաւական է ըսել թէ անցորդ մը զայն լքեալ անպատ մը պիտի կարծէր՝ եթէ խօլախոտերու թանձրութեան մէջէն՝ հոս հոն ցրուած քանի մը գերեզմանաքարեր չի տեսնուէին. մինչդեռ անկէ քիչ մը վարը՝ ուրիշներու գերեզմանատունները սուտ դրախտի մը պատկերը կը ներկայացնեն մեր լքեալ հանգստավայրին մօտ: Դիտած ենք թէ ամեն անգամ որ մեռեալ մը թաղելու կերթանք հոն՝ մեր ստացած անմիջական տպաւորութեան տակ՝ կը խորհինք մեր սիրելեաց այդ հանգստատեղին նախանձելի վիճակի մը մէջ զընել: Բայց երբ մեր գործերուն կը վերադառնանք՝ ամեն խորհուրդ ու տպաւորութիւն կը ցրուին, և կըսպասենք մինչև որ ուրիշ մ'ալ թաղելու երթանք՝ գերեզմանատան վրայ մտածելու համար:

Անտէր, անխնամ ու երեսէ ձգուած վայրի մը կը նմանի Հայոց գերեզմանատունը որ ոչ վարչութիւն մը ունի և ոչ ալ պահպան: Մեռեալ մը հոն թաղելու համար՝ բաւ է որ մէկը երթայ ու պեղիչներուն տեղ մը նշանակէ:

Հայ գաղթականութիւնը ընդհանրապէս՝ իսկ Հոգարարձութիւնները մասնաւորապէս պատասխանատու են իրաց այս վիճակին համար:

Մեր գերեզմանատան երևոյթով մարդիկ իրաւունք ունին դատել ու չափել մեր ունեցած սիրոյ աստիճանը գէպի մեր հանգուցեալ բարեկամներն ու սիրելիները. կրնան նաև տեսնել մեր անհոգութեան ու անտարբերութեան աստիճանը որ այսպիսի խնդիրներու մէջ չափէն աւելի աչքի կը զարնէ:

Այս ալ մոռցուած խնդիր մ'է որ պէտք է և անհրաժեշտ է որ լուծենք, և լուծենք շուտով:

Ոչ մեծ ծախքի մը կը կարօտի այս գործ, և ոչ ալ առանձին հանգանակութիւն մը բանալու անհրաժեշտ պէտք մը կայ: Քիչ մը կամք ու եկեղեցեաց գանձերէն քիչ մը դրամ կրնան գերեզմանատունը իր ներկայ վիճակէն պարտիլի մը նմանցնել:

Երկու եկեղեցիներու Հոգարարձութիւնները եթէ հասկացողութեան մը գան այս մասին, ու խառն Վարչութիւն մը քննարկեն՝ յատուկ ծրագրով մը՝ այս մոռացեալ խնդիրը լուծուելու ճամբուն մէջ կը մտնայ:

Մենք ամենքս ալ կը ճգնինք շարունակ տուն մը ունենալու և զայն փառաւոր կերպով կահաւորելու համար: Այս տունին մէջ զիտենք թէ կարճ ժամանակ մը միայն պիտի ապրինք, վասն զի մահուան պէս ան-

հրաժեշտ եկող այցելու մը չունինք կեանքի մէջ. սակայն զարմանալի է թէ ոչինչ կրնենք այն տունին համար ուր պիտի ննջենք մինչև այն օրը՝ երբ մեռեալները իրենց գերեզմաններէն դուրս պիտի կանչուին:

Այդ տունին մաքրութեան համար հաւաքական ճիգ մը ընելը մեր ամենուս պարտականութիւնը չէ:

\* \* \* \* \*

Բոլորովին անհիմն և թերևս վերին աստիճանի թըշնամական է այն լուրը որ տարածուած է քաղաքիս մէջ թէ՛ ընտրութիւններէ վերջ կամ առաւուսին յառաջիկայ տարեգլխին Վաղաքացին պիտի դադրեցունենք եղեր: Այսպիսի լուրեր հեղինակող մարդիկ լաւ պիտի ընէին եթէ սորվէին քիչ մը իրենց զրախօսութիւնները դադրեցնել:

ԳՐԻԳՈՐ Կ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ,

ԳՈՐԾԱԿԱԼ

ԿԵԱՆՔԻ ԵՒ ԿՐԱԿԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

Կապահովագրէ մէկէ մինչև եօթանասուն տարեկան անձինք՝ առանց սեռի խտրութեան:

ՊԱՇՏՕՆԱՏԵՂԻ | Ֆրէզնօ Լօն Էնտ Սէյվինկ Պէնք  
Պիլտինկ. Սենեակ, Թիւ 14 և 15

Փօսթ Օֆիս Պաքս, 1285 | ՖՐԷԶՆՕ, ՔԱԼ.  
Թէլէֆօն, պլու 272

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

1249 Այ փողոց, Ֆրէզնօ, Քալ.

Թորոս Զրաքեան — — — Ճաշարանատէր  
Յարգանք կը ծախուցանէ իր յաճախորդներուն և հայ հասարակութեան թէ իր նախկին՝ Ճէյ փողոցի ճաշարանէն փոխադրուած է յիշեալ խանութը, ուր նորանոր կարգադրութիւններ ու յաւելումներ ըրած է: Կերակուրներու գնին վրայ թէև յաւելում մը չէ եղած, բայց մաքրութիւն, առատութիւն և ընտիր կերակուր սուլ կարենալու համար ամեն նախապատրաստութիւն եղած է, անանկ որ ոչ ոք պիտի սոճնայ զայն Հայկական ճաշարան մը անուանելու: Փորձեցէք մի անգամ:

ԾԱԽՈՒ ԳՐՔԵՐ

Ամեն անոնք որ կը փափաքին Վենետիկ տպուած որ և է զիրք ստանալ, կրնան գոյնա ձեռք բերել խրմբագրութեան միջոցաւ, որ նոյն Միաբանութեան գործակալ կարգուած է:

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ԿՈՒՋԵՆՔ

Ամեն հայաբնակ քաղաքի մէջ Շարաթաթերթս տարածելու համար: Պայմանները շատ նպաստաւոր են: Գրել խմբագրութեան հասցէին:

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔՅԻ տպարանին մէջ կը տպուին ամեն տեսակ Հայերէն և Անգլիերէն գործեր՝ Այցետոմս, նամակաղբիւր, պահարան, հարսանեկան ծանուցագիր և տեսարակներ գոհացուցիչ գներով:

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՉԱՄԻՉԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԳԵՊԱՆՆԵՐՈՒՆ

Ընկերութեան պատկանող այգիպանները հետևող կանխավճարները պիտի ստանան.

Իմփերիլը քլըսթըր, փունտին	5	սէնթ
Տիհէչա քլըսթըր	5	սէնթ
Ֆէնսի քլըսթըր	5	սէնթ
3 քրան Լընտըն լէյըր	4	սէնթ
2 քրան Լընտըն լէյըր	4	սէնթ
4 քրան Լաթանտըրա	3 և 4/5	սէնթ
3 քրան Լաթանտըրա	3	սէնթ
2 քրան Լաթանտըրա	2 և 4/5	սէնթ
Սիալէս մաքթ. Լաթանտըրա	2 և 4/5	սէնթ
Սիալէս սըլթանաա	2 և երեք չորրորդ սթ.	

Քալիֆ. Բէյլին Կրօւըրա Աստիէչըն Ա. Լ. ՍԷՅԸՐ, Ա. Պեննապիլր

ՍԱՆԹԱ ՖԻ

\*\* ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐՈՒ ԼԱԻԱԳՈՅՆ ԳԻԾԸ \*\*  
Ճամբորդին համար ամեն հանգիստ և դիւրութիւն

Սանթա Ֆի երկաթուղեաց ճամբան լաւագոյնը կարճ ու ամենէ արագն է՝ արեւելք երթալու կամ արեւեքէ հոս գալու համար:

Ուղղակի շոգեճառային և երկաթուղիի տոմսեր Հին Ալիսարհի ամեն կողմերուն և անն կողմերէն գալու համար: Տոմսի գրամները կրնան հոս վճարուիլ. եթէ տոմսերը չի գործածուին՝ գրամը



ետ կը արուի: Սան Ֆրանսիսկօ երթալու լաւագոյն ճամբան է այս: Տեղեկութիւններ սիրով կը արուին թէ՛ կայարանը և թէ՛ քաղաքիս գրասենեակը՝ ի թիւ 1031 Ճէյ փողոց, Ֆրէզնօ: Թ. Ա. ՃՕՆՍ, Գրովի.

ՍԱՆԹԱ ՖԻ  
Երկաթուղեաց Ընկերութիւն

ՄԱՐԴՆ ՈՒ ԻՐ ՆԱԳՈՒՍԸ

— 0 —

Ա.

Խնձորենայ մը թանձր շուքին տակ՝  
Ամբան տաք օր մը՝ մի դժբաղդ յոյնած  
Անձ մը կը ննջէր՝ հազուսաններով հին,  
Երազներու մէջ ինկած մարդած:

Երբ երկրագործը հեռուէն տեսաւ  
Այդ կասկածելի անձ՝ կանչեց խմբով  
Իր ծառաները օր համին մէկէն  
Այդ մարդն իր երկրէն դուրս հանեն շուտով:

Ծառաներն եկան՝ բիրտ ու խստագէմ՝  
Բազ ու փայտ առած, զինուած քարերով

Խեղճ մարդուն վրայ ինկան կատաղի՝  
Գանակոծեցին զայն անխիղճ կերպով:

Դժբաղբ ճամբորդի բերնէն ու քթէն  
Արիւնը վաղեց, ինկաւ անկէնդան,  
Անոր հանդերձներ՝ անշուք ցնցոտիք  
Վէրքերէն վազող արեամբ թրջեցան:

Երբ երկրագործին դուտորը միամօր  
Լսեց այս ամեն՝ դուրս եկաւ հանդէս,  
Վանեց ծառաներն՝ պաշտպան օտարին՝  
Արտասուեց, ըսաւ հօրն անհեռատես.

"Հայր, մի՛ դատեր զայն իր հինցած  
Հազուսաններով պէսպիսի."

"Հազուսանները մարդ չեն շիներ,  
արժանիքը կը խօսի."

"Գուցէ աղնիւ հոգի մ'է այն.  
Զայն քու դռնէդ մի՛ վաներ՝"

"Յնցոտեաց մէջ շատ պահուած կան  
Աղնիւ սրտեր հոգիներ:"

Բ.

Կէս գիշեր էր՝ մութ գիշեր մը,  
Լուսին չի կար այդ գիշեր.  
Արևմուտքէն ուժգին հով մը  
Սուր անընդհատ կը փչէր:

Երկրագործի սենեակներէն  
Յանկարծ բոցեր երևցան.  
Քիչ ատենէն տարածուելով  
Մինչև երկինք բարձրացան:

Երկրագործը սարսափահար  
Ծառաներէն կը խնդրէր  
Որ բոցերու միջէն անցնին  
Սենեակն հասնին իր դատեր՝

Զայն ազատեն՝ բերեն իրեն  
Ու ստանան ի նուէր  
Հարատութիւն, տուն, ագարակ,  
Ամեն ինչ որ ինք ունէր:

Բայց ծառաներ՝ երկչոտ ու վատ՝  
Մէկգի քաշուած մերժեցին.  
Իսկ բոցերը, մուխ ու կրակ  
Տունը բոլոր ծածկեցին:

Բայց անդիէն մէկը փութաց  
Բոցին ծուխին մէջ վաղեց.  
Անձանօթ մ'էր՝ օտար մի անձ,  
Որուն ոչ ոք չի ճանչցոյ:

Յնցոտիներ հազած մարդն էր  
Որ դուրս եկաւ քիչ մը վերջ.  
Ու տանախրով հէգ աղջիկը  
Գրկած ունէր թեւին մէջ:

Երկրագործը՝ ամօթահար  
Փութաց անոնց քով վազել՝  
— Ի՞նչպէս, ըսաւ, ազնիւ տղա,  
Ի՞նչպէս զքեզ վարձատրել:

— Բենէ ոչինչ կահնկայեմ  
Ոչինչ կուզեմ քենէ ես.  
Զի իմ վարձքս առի առտուն  
Երբ աղջիկը ըսաւ քեզ.

"Հայր, մի դատեր զայն իր հինցած  
Հագուստներով պէսպիսի,"  
"Հագուստները մարդ չեն շիներ,  
Արժանիքն է կը խօսի."  
"Գուցէ ազնիւ հոգի մ'է այն,  
Զայն քու դռնէդ մի վանէր."  
"Յնցոտեաց մէջ շատ կան պահուած  
Ազնիւ սրտեր հոգիներ."  
(Նման) Հ. Է.

**GEORGE BROS.**

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ  
ՃԵՐՄԱԿԵՂԷՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ՃԷՅ Փողոց, — Ծիւփ Պլաք — Ֆրէզնօ.  
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-  
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն ապրանք  
իրենց տեսակներուն մէջ լաւագոյններն են, բայց շատ  
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատաբար ու-  
րիշներէ բնաւ տարբերութիւն չունին:

Կը փափաքինք որ անգամ մը փորձէք և վստահա-  
ցնէք դուք զձեզ այս կարեոր կէտին համար. անկէ  
յետոյ ուրիշ տեղ չէք երթար գնել ինչ որ կարելի է  
ստանալ ճՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

**ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ**

**ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ**

ՀԱՄԱՐ ԳՆԱ

**Տօրսիյ Բապիւնարն Ընկ.**

Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը

**ԿԸՇԱԽՈՒԻ**

Հարիւր վաթսուն էքբրոց առաջնակարգ այգեստան  
մը որուն կէսը այգի է, իսկ միւս կէսը դեղձենի: Տուն,  
ախոռ, կառքեր, ամեն տեսակ գործիներ, թրէյզ, սըն-  
տուկներ, ձիեր ևն. Մանրամասնութեանց համար զը-  
րել կամ դիմել խմբագրութեանս:

Ճ. Մ. Սերոբեան, Ճ. Պաննըր, Յ. Մ. Սերոբեան

**Սան Ռօքիև Վայի Լուևո Քօ,**

Ճ. ՊԱՆՆԸՐ, Վարէչ.

ՀԱՍՏԱՏՈՒՆ ԿԱԼՈՒԱԾ ԵՒ  
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւ 954 ԱՅ Փողոց, Ֆրէզնօ, Քալիֆօրնիա:  
Թէլէֆօն, Մէյն 40

Եթէ կը փափաքիս գնել կամ ծախել մշակուած կամ  
անմշակ ամեն տեսակ կալուած՝ եկուր և մեզ տես թէ  
ինչ տեսակ առաջարկութիւններ կրնանք ներկայացնել  
քեզ: Ներկայացուցիչներն ենք շատ մը առաջնակարգ  
ապահովագրական ընկերութեանց, որոց համար ձեր  
գործերը կը խնդրենք:

**DR. GAZARIAN  
DENTIST**

**Տրք. Յ. Ղազարեան,**

Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Գ. ՈՐԾ ԵՒ Ա. Տ. Ա. Մ. Ն. Ա. Բ. ՈՅԺ

Չանա Պլաք, ԱՅ Ըսթրիթ, Ֆրէզնօ, Քալ.

Գոհացուցիչ և առաջնակարգ գործ: Կատարեալ գո-  
հացում Յաճախորդներուն: Գիները միշտ չափաւոր:

Թէլէֆօն — — — — — Ուայթ 231

**ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ**

— 0 —

ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԵՐԸ

— 0 —

Երկրագործութիւնը այն գիտութիւնն է որ կը սոր-  
վեցնէ՝ կարելի եղած լաւագոյն միջոցներով հողը մը-  
շակել և անոր արտադրութիւնները ծախել:

Ոմանք երկրագործութիւնը կը նկատեն տեսակ մը  
առևտուր որ երկրագործին ու վաճառականին միջև  
տեղի կունենայ. ոմանք ալ զայն արուեստ մը կը նկա-  
տեն: Այս վերջիններու կարծիքը աւելի տրամաբանա-  
կան եղած ըլլալ կը թուի՝ քանի որ այսօրուան օրս  
երկրագործ մը՝ ստանց երկրագործական գիտութեան  
և առանց անոր ընդհանուր տարրական ծանօթութեանց  
տեղեակ ըլլալու չէ՝ կարող զայն ի գործ գնել շահա-  
բեր եղանակաւ:

Ենթադրուած գիտութեան ըրած հսկայաքայլ յառաջա-  
դիմութեան՝ երկրագործութիւնը նկատուեցաւ ճար-  
տարարուեստ մը իր գանազան ճիւղերով, որք են այդե-  
գործութիւն, պարտիզպանութիւն, կաթնափաճառու-  
թիւն, պանրագործութիւն. և այլն:

Մեր նպատակն է այսօր խօսիլ կաթնափաճառու-  
թեան մէկ մասին՝ կաթնատու կովերու վրայ: Կու-  
զենք ցոյց տալ մեր ընթերցողաց թէ ինչպէս կարե-  
ւի է ընտիր կով մը ձանչնալ իր արտաքին երևոյթէն,

և թէ ինչ կերպով կրնայ առատ և ընտիր կաթ առնուիլ անկէ:

Կաթ ստանալու համար կով գնելը գիւրին բան մը չէ բնաւ, իսկ կարագ պատրաստելու նպատակաւ կով ծախու առնելը աւելի զգուշութեան կը կարօտի. վաւրնզի պէտք է գիտնալ թէ ամեն կով մի և նոյն կաթը չի տար և ամեն կաթ մեծ տարբերութեամբ կը զանազանին իրարմէ՝ քիմիական բաղադրութեանց մասին: Արդ՝ երբ մէկը կով մը գնել կուզէ՝ պարտի հետեւի ֆրանսացի ճարտարարուեստ երկրագործ՝ Քորնըվէնի խրատներուն, որոնց համեմատ՝ եթէ կուզես լոկ կաթ ծախել՝ Հոլանտական կով գնէ, եթէ նպատակդ է կարագ պատրաստել՝ Ճէրզիի կամ Նորմանտիայի կով ծախու առ, իսկ եթէ պանիր պիտի պատրաստես՝ Զուրիցերիականն նախապատիւ է միշտ:

Կով մը երկու տարեկանէ մինչև վեցը առատ կաթ կուտայ. այդ տարիքներէն առաջ կամ վերջը կաթին քանակութիւնը՝ համեմատաբար՝ նուազ կըլայ և կը պակսի անոր քիմիական ծանրութիւնը:

Կովերու բոլոր ցեղերուն մէջ կան ի հարկէ լաւ ու գէշ անասուններ: Արպէս զի գնելու ժամանակ երկրագործը չի շփոթի՝ միտ գնելու է Քորնըվէնի խրատներուն: Նուրբ գլուխ, երկայն երես, քաղցր նայուածք, բարակ եղջիւրներ, պարանոցէն կախ մորթը պղտիկ կամ ոչ բնաւ, լայն որովայն, բարակ մորթ և նուրբ մազեր ունեցող կով մը սրուն ծիծերն ալ ազատ լինին ու և է անրնական երևոյթէ՝ ընտիր ու փափաքելի անասուն մ'է իր տեսակին մէջ: Իրարու կից կամ իրարմէ զուգահեռական չեղող պակուկ ունեցող կով մը ակնկալուած առաւելութիւնները չի կրնար ունեցած ըլլալ: Յիշելու է միշտ թէ կաթնատու կով մը գիր ըլլալու չէ բնաւ:

Մոռնալու չենք թէ կովի մը ստացած անունը և պահուելու եղանակը մեծ դեր կը խաղան անոր արտադրած կաթի տեսակին ու քանակութեան հետ: Աւելորդ է թերևս ըսել թէ կենդանիին առատ անունդ տալու է, բայց հարկ է յիշեցնել թէ խոհեմութիւն չէ անոր քանակութիւնը աւելցնել կամ պակսեցնել: Թարմ խոտը միշտ նախամեծար է խարէն: Եթէ կենդանին չափէն աւելի ջուր կը խմէ՝ պէտք է որ անոր խմելքը գաղջ վիճակի մէջ տալ:

Կարագը կը ներկայանայ կաթին մէջ մանրադիտական գնտակներու ձևով. ասոնց թիւը իւրաքանչիւր մէկ լիտրի մէջ 80,000 միլիոնի կը հասնի: Ասոնք զանազան մեծութիւն ունին, և իրարմէ անջատ կը մընան հաւասար հեռաւորութեամբ: Կաթը կըթելէ չորս հինգ ժամ վերջը անոր այս պարարտ բաժնին 100ին 40ը միայն կարելի է առնել, իսկ քսան չորս ժամ վերջը՝ անոր հարիւրին ութսունը կրնայ առնուիլ:

Ընտիր կով մը՝ եթէ իւրացի կերպով ու կանոնաւորութեամբ պահուի՝ պէտք է տարուան մէջ իր ունեցած ծանրութեան գէթ հինգ անգամը կաթ տայ. 400 քիլո կշռող կով մը երկու հազար քիլո կամ 1936 լիտր կաթ արտադրելու է:

Ս. Կ. ԳԵԼԼԸՃՃԵԱՆ

**ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՈ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**

1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹՐԻԹ  
Մեծաքանակ վաճառականք Նափայի, Արնամայի ևն. գինիներու, տեղական և ներածեալ օղիներու:  
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉ ԷՅՃԷՆԹՆԵՐ  
Բիւսթիլովի ապաշով դեղ ճանչցուած ՈՒԻԹՐՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Զուրերուն: — Թէլէֆօն, Ուայթ 817:—

**Քաւոյ Եղբայրներ**

Կը ծանուցանեն թէ այս տարի ևս կակնկալեն ընդունիլ Հայ այգեպաններու արտադրած պտուղներն և՛ կը վստահացնեն թէ ամէն յաճախորդ գոհ պիտի մնայ այս ծանօթ տունէն:

**J. K. ELLEZIAN**

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն  
Նպարեղէններու, պտուղի, սիկարի, ծխախոտի, թէյի, սուրճի, պէյքինկ փավտըրի, ձիթալուղի ևն,  
1145 ԱՅ փողոց — Ֆրէզնօ — Թէլէֆօն Պաք 773

**Պարքիօք Ըսրէյալըս,**

Էլ և Ֆրէզնօ փողոցներ, Պարտիզին դիմացը  
Թէլէֆօն, մէյն 174 — — — — Ֆրէզնօ  
Վարձու կառքեր, ճամբորդներու ձիերուն հոգատարութիւն: Գնել և ծախել: Բոլոր գիշերը բաց ենք:

**ԳՆԱ ԱՌ**

**ՊԱՐՐԷԹ ՀԻԲՍ ԸՆԿ.**

ՎԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ, ՊՈՂՊԱՏԵԱՅ ԲԱՆՁԵՐՈՒ, ՆԵՐԿԻ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ  
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՐԿԱԹԵՂԷՆ  
1035-1041 ԱՅ ՓՈՂՈՅ ԹԷԼԷՖՈՆ  
ՖՐԷՉՆՕ, ՔԱԼ ԷՔՅԷՆՆՆ — ԹԻՒ 2

Ձեր Ապահովագրութեան համար դիմեցէք առ  
**Պ. Յ. Շեփհրար և ը Ընկ.**  
1123 ՃԷՅ Ըսթրիթ  
Պահանջները փութով կը վճարուին: Յաճախորդք միշտ գոհացում կստանան:

**ՁԵՐ ԱՏԱԽՁՆԵՐԸ ԳՆԵՑԻՔ**

**Ս. Ա. ՓԻՐՍ**

ԱՏԱԽՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԷՆ: ՓՐԷՉՆՕ ՔԱԼ.

**Տքք. Յ. Հ. Բարսեղեան**

ՖՐԷՉՆՕ ԼՕՆ ԷՆՏ ՍԷՅՎԻՆԿՍ ՊԱՆՔ ՊԻԼՏԻՆԿ  
Սենեակ 16 17, Թէլէֆօն Պաք 492. Ֆրէզնօ Քալ.